ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն), հուլիսի 4-ից 7-ը, 2023 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   «Երեխաների խնամք» հասարակական կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը.**
   Աշխատանքային այց՝ երկկողմ համագործակցության և համատեղ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր քննարկելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Այցի շրջանակում հանդիպել եմ Մեծ Բրիտանիայի Սոցիալական արդարադատության կենտրոնի (CSJ) գործադիր տնօրեն Էնդի Կուկի և Ընտանիքի հիմնահարցերի բաժնի ղեկավար Քրիստինա Օդոնի հետ: Հանդիպմանը ներկա է գտնվել նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը: Ընդգծելով երկկողմ համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքների կարևորությունը՝ քննարկվել են երկու երկրների սոցիալական պաշտպանության ոլորտին առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես՝ սոցիալապես անապահով խմբերի զբաղվածության խթանման, սոցիալական

արդարության համակարգի զարգացման, երեխաների իրավունքների պաշտպանությանն ու ընտանիքի ամրապնդմանն ուղղված ծրագրերը: Այս համատեքստում ներկայացրել եմ ՀՀ կառավարության կողմից իրականացվող միջոցառումները, որոնք նպատակ ունեն սոցիալական աջակցության, զբաղվածության ծրագրերի և այլ ծառայությունների միջոցով ակտիվացնել սոցիալապես անապահով խմբերին, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին:Ներկայացվել է նաև զբաղվածության ոլորտում նախարարության կողմից իրականացվող բարեփոխումները՝ ռազմավարության մշակման, գործատու-աշխատող իրավահարաբերությունների զարգացման, կամավոր աշխատանքի ինստիտուտի ներդրման, աշխատուժի հմտությունների կատարելագործմանն ուղղված աշխատանքները: Կարևորելով հայ-բրիտանական հարաբերությունների շարունակականությանն ուղղված ջանքերը՝ գործընկերները պատրաստակամություն են հայտնել փորձի փոխանակման, մասնագետների այցերի և ծրագրերի իրագործման շրջանակում աջակցել սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներին:

- Հանդիպում եմ ունեցել Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերի տիկնոջ՝ Շերի Բլերի հետ, ով ղեկավարում է Կանանց հիմնադրամը: Հանդիպման ընթացքում քննարկվել են կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության, գենդերային քաղաքականության, կանանց տնտեսական զորեղացման ու վերջիններիս կայուն զբաղվածության ապահովման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայություններին առնչվող մի շարք հարցեր: Ներկայացրել եմ նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետ համատեղ ջանքերով իրականացված «Պլատֆորմ #5» հարթակի, Աքսելերատոր և Պրե-աքսելերատոր ծրագրերի մանրամասներն ու արձանագրված արդյունքները. երևանաբնակ և մարզաբնակ կանանց հնարավորություն է տրվել դասընթացների միջոցով զարգացնել իրենց ձեռնարկատիրական հմտություններն ու իրագործել բիզնես գաղափարներ: Շուրջ 1400 կին մասնակցել է թվային մարքեթինգի դասընթացների և կատարելագործել հմտությունները:
  Շերի Բլերն անդրադարձավ իր կողմից ղեկավարած հիմնադրամի գործունեությանը, իրականացված քարոզարշավներին, որոնց շրջանակում աշխարհի բազմաթիվ կանայք ստացել են ձեռներեցության և բիզնես գաղափարների իրագործման գիտելիքներ, զարգացրել իրենց կարողությունները: Հիմնադրամի շնորհիվ 2008 թվականից սկսած աշխարհի հարյուրից ավելի երկրում ձեռներեցությամբ է զբաղվել շուրջ 230000 կին: Նախատեսվում է մինչև 2030 թվականը ևս մեկ քարոզարշավի իրականացում՝ ներգրավվելով շուրջ մեկ միլիոն կանանց:
  Պատրաստակամություն եմ հայտնել միանալ այդ նախաձեռնությանը և Հայաստանում ևս իրագործել այդ ծրագիրը՝ ընդգծելով կանանց տնտեսական զորեղացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման գործում

համատեղ ջանքերի մեկտեղման անհրաժեշտությունը, որոնք կարող են առանցքային հարթակներ լինել վերջիններիս ինքնազարգացման ու ինքնադրսևորման համար:Եկուստեք շեշտվել է համագործակցության ընդլայնման ուղղությամբ շարունակական քայլերի իրականացման կարևորությունը. պայմանավորվածություն է ձեռքբերվել ստորագրել համագործակցության հուշագիր:

- Հանդիպել եմ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ Լորդ Լամինգի և դպրոցական համակարգի և ուսանողների ֆինանսների հարցերով խորհրդարանական փոխպետքարտուղար, Կրթության և երեխաների խնամքի հարցերով նախարար Բարոնուհի Բարանի հետ: Քննարկվել են երկու երկրների սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումները. երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների որակի բարելավման, պետության կողմից տրվող սոցիալական աջակցության հարցերը: Աշխատանքների արդյունավետ իրագործման համար երկուստեք կարևորվել է փորձի փոխանակման հնարավորությունը:
  Զրույցի ընթացքում ներկայացրել եմ կանանց և երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացվող ծրագրերը՝ այդ գործընթացում կարևորելով պետության, միջազգային և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև համայնքների փոխգործակցությունը: Լորդ Լամինգն ու Բարոնուհի Բարանը ներկայացրին Մեծ Բրիտանիայի երեխաների իրավունքների պաշտպանության և կրթության, խոցելի խմբերի տնտեսական ակտիվացմանն ուղղված, կանանց ներուժի օգտագործման, ընտանիքի պահպանման մոդելներն ու ուղղությունները:
  Ընդգծելով երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների, ինչպես նաև ոլորտային արդյունավետ համագործակցության դերը՝ երկուստեք շեշտվել է համատեղել ջանքերը՝ քննարկված հարցերի ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացման նպատակով:

- Մեծ Բրիտանիա կատարած այցի շրջանակում հանդիպել եմ նաև Խորհրդարանի համայնքների պալատի անդամ, Երեխաների և ընտանիքի նախկին նախարար Էդվարդ Թիմփսոնի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական պաշտպանության պետական երաշխիքների ապահովման, այլընտրանքային ծառայությունների շրջանակների ընդլայնման, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավման, ինչպես նաև խնամատարության ինստիտուտի զարգացմանն ուղղված ծրագրերը: Ներկայացրել եմ խնամատարության ինստիտուտի ընդլայնման և զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքները և հավելել, որ դրանք կրում են

շարունակական բնույթ՝ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելով խնամատար ծնող ցանկացող անձանց համար, խնամատար ընտանիքի վերաբերյալ հանրության շրջանում բարձրացնելով իրազեկվածության մակարդակը:
Էդվարդ Թիմփսոնն իր հերթին խոսել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության խնամատարության ինստիտուտի կայացման գործում իր ընտանիքի անմիջական մասնակցության մասին. 25 տարիների ընթացքում շուրջ 90 երեխա՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող, ապրել է նախարարի ընտանիքում:
Երկուստեք ընդգծվել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրական կարգավորումների, այլընտրանքային խնամքի կազմակերպման ձևերի և այլ հարցերի շրջանակում համագործակցության անհրաժեշտությունը՝ երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման կարևորությունը:

- Քենսինգթոնյան պալատում հանդիպել եմ Քենթի արքայազն Մայքլ Ջորջ Չարլզ Ֆրանկլինի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների սոցիալական պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական և բարեգործական կազմակերպությունների, ասոցիացիաների, հիմնադրամների հետ իրականացված ծրագրերն ու համագործակցության արդյունքները:
Ընդգծելով պետություն-մասնավոր հատված փոխգործակցության կարևորությունը՝ ներկայացրել եմ երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ ոլորտներում գործող կազմակերպությունների կողմից անձի կարիքին համապատասխան տրամադրվող ծառայությունները:
Քենթի արքայազն Մայքլ Ջորջ Չարլզ Ֆրանկլինը խոսեց շուրջ 100 բարեգործական և այլ կազմակերպությունների ծրագրերում իր ներգրավվածության, հանրային աշխատանքի, խոցելի խմբերի իրավունքների իրազեկման արշավների մասին, որոնց մի մասը ֆինանսավորվում է իր ընտանիքի կողմից: Անդրադարձավ նաև առանց ծնողական խնամքի մնացած և հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայություններին, խնամատար ընտանիքի, ինչպես նաև այլընտրանքային խնամքի կազմակերպման ձևերին:
Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումների հիմքում երկուստեք շեշտադրվել է երեխայի լավագույն շահի ապահովումը:

- Երեխաների պաշտպանության ու ծնողավարման հարցերով «Southwark» խորհրդի ղեկավար կազմի հետ հանդիպման ընթացքում քննարկել ենք հասարակության բոլոր ոլորտներում սոցիալական աշխատողի ներգրավվածության և այդ ինստիտուտի կայացմանն ուղղված ծրագրերը: Ներկայացրել եմ Հայաստանում սոցիալական աշխատանքի և սոցիալական

աշխատողի ինստիտուտի ներդրման և զարգացման ուղղությամբ իրականացվող շարունակական աշխատանքները: «Southwark» խորհրդի անդամները ներկայացրել են Միացյալ Թագավորության սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները, օրենսդրական կարգավորումները, սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը և կիրառվող գործիքակազմը՝ խնամատարության ինստիտիտի զարգացման համատեքստում:

- Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունում բժիշկ Սթիվեն Լեոնարդ Ալեքսանդր Ջեֆերիին հանձնել եմ Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալը՝ առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետությանը մատուցած ծառայությունների և մարդասիրական անխոնջ գործունեության համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցության ընդլայնման, խնամատարության ինստիտուտի զարգացման նպատակով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Մեծ Բրիտանիայի «Երեխաների խնամք» հասարակական կազմակերպության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որը նախկինում ստեղծված սերտ համագործակցության արդյունքն է:
2023 թվականի հունվարին իմ հրավերով խնամատարության մասին պատմող «Շանհայի երեխաները» ֆիլմի ցուցադրման շրջանակում Հայաստանում էր գտնվել «Երեխաների խնամք» ՀԿ-ի հիմնադիր Ռոբերտ Գլովերը. կիսվել սեփական փորձառությամբ և խնամատար ընտանիքի զարգացման իր տեսլականով:
Հուշագրի ստորագրման արարողությանը մասնակցել է նաև «Երեխաների խնամք» ՀԿ-ի աջակից, Քենթի արքայազն Մայքլ Ջորջ Չարլզ Ֆրանկլինը:
Հուշագրի շրջանակում նախատեսվում է փորձի փոխանակման, վերապատրաստումների և մասնագիտական այցերի միջոցով կատարելագործել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումն ապահովող գործընթացները, ինչպես նաև կազմակերպել 2023 թվականի սեպտեմբերին Երևանում կայանալիք «Խնամատարության ինստիտուտի զարգացումը» թեմայով տարածաշրջանային համաժողովի անցկացման աշխատանքները: Պայմանավորվածություն է ձեռքբերվել այն պարբերաբար անցկացնել Հայաստանում:

7/12/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ստորագրությունը, ամսաթիվը:

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ վարչապետի 26.06.2023 թ-ի 687-Ա որոշում***

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ ԱՍՀՆ նախարար՝ Նարեկ Մկրտչյան

4. Գործուղման վայրը-***Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն***

5. Գործուղման ժամկետները ***04.07.2023-07.07.2023***

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ***ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		***Մկրտչյան Նարեկ***	***Ընդամենը (հազ. դրամ)***
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը **(էկոնոմ դաս,** բիզնես դաս)	348,000	**348,000**
	Ավիատոմսի և ավիատոմսի ամրագրման արժեքը (դրամ)	-	-
Գիշերա-վարձի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	228	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	52,901.92	-
	Օրերի քանակը	3	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	***158,705.76***	***158,706***
Գիշերա-վարձի լրացուցիչ հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	***228***	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	***35,303.60***	-
	Օրերի քանակը	***3***	
	Ընդամենը վճարվել է (դրամ)	***105,907.82***	**105,908**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	123	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	47,565.33	-
	Օրերի քանակը	4	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	***190,261***	**190,261**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային Նմուշառումների վճար	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			**802,875**

****օրապահիկի և գիշերավարձի կանխավճարի հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի «28» «հունիսի» 2023 թվականի 1 դոլարին համարժեք 386.71 ՀՀ դրամի չափը***

****գիշերավարձի լրացուցիչ հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի «11» «հուլիսի» 2023 թվականի 1 դոլարին համարժեք 387.09 ՀՀ դրամի չափը***

X

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

11.07.2023